Կարգ

բացառությամբ սառը և նետողական զենքերի, առաջին անգամ զենք, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացիների կողմից զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունների

Վերջին փոփոխությունը՝ 28. 07. 2025 թ.

Էջերի քանակը՝ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
1.1. Փաստաթղթի մասին 3
1.2. Հապավումներ և հասկացություններ 3
1.3. Ընդհանուր դրույթներ 4
2. Քննական գործընթաց 5
2.1. Հայտագրում և փաստաթղթերի ներկայացում 5
2.2. Տեսական քննության անցկացում 5
2.3. Գործնական քննության անցկացում 7
2.4. Գործնական քննության գնահատում 10
2.5. Արդյունքների ամփոփում և հայտնում 11
2.6. Բողոքարկում 12
2.7. Հավաստագրի հանձնում 12
Հավելված 1. Գնահատման թերթիկ 13
Հավելված 2. Քննական տոմսեր 14
Հավելված 3. Դիմում–բողոքի ձևաթուղթ 16
Հավելված 4. Ինքնաձիգի հիմնական մասերն ու մեխանիզմները 17
Հավելված 5. Ռազմամթերք 18

1. Ներածություն

1.1. Փաստաթղթի մասին

Սույն կարգով սահմանվում է «Ազատազէն» կրթական հասարակական կազմակերպության կողմից առաջին անգամ զենքի, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացիների կողմից զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունների անցկացման գործընթացը: Գործընթացը ներառում է հայտագրումը, քննությունների կազմակերպումը, անցկացումը, գնահատումը, արդյունքների հայտնումը, բողոքարկումը և հավաստագրի հանձնումը:

Սույն փաստաթղթի հիմքում ընկած են ՀՀ ներքին գործերի նախարարի 2023թ. օգոստոսի 28-ի թիվ 3-Ն հրամանը (իր հետագա փոփոխություններով և լրացումներով) և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀԱԱԳՎ պետի ՊԺԿ 2024թ. հուլիսի 11-ի թիվ 1-Լ հրամանի Հավելվածներ 1-ը և 2-ը:

1.2. Հապավումներ և հասկացություններ

Կազմակերպություն	«Ազատազէն» կրթական հասարակական կազմակերպություն:
Դիմորդ	Անձ, որը հանձնում է տեսական և/կամ գործնական քննությունը:
Հրաձգարան	«Ազատազէն» ԿՀԿ Երևանի քաղաքացիական բաց հրաձգարանը կամ Կազմակերպության կողմից քննության անցկացման համար օգտագործվող այլ հրաձգարան:
Հանձնաժողով	Կազմակերպության ղեկավարի կողմից ձևավորված երեք անդամից բաղկացած մարմին, որում ընդգրկված է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության 1 ներկայացուցիչ և որը պատասխանատու է քննությունների գործընթացն իրականացնելու համար:
Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի կազմից ընտրված անձ (սովորաբար՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչ), ով պատասխանատու է հանձնաժողովի որոշումները ստորագրելու և քննության գնահատականը հայտնելու համար:
Հրաձգության ղեկավար	Կազմակերպության հրաձգարանի ներկայացուցիչ, ով պատասխանատու է գործնական քննության ընթացքի վարման համար:
Հրաձգության հրահանգիչ	Կազմակերպության հրաձգարանի ներկայացուցիչ, ով պատասխանատու է գործնական քննության առանձին վարժությունների իրականացման և գնահատման համար:

1.3. Ընդհանուր դրույթներ

Առաջին անգամ զենք, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացիների կողմից զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության ստուգումն անցկացվում է 2 փուլով՝

- տեսական քննություն,
- գործնական քննություն։

Տեսական քննությունն անցկացվում է համակարգչային թեստավորման եղանակով՝ Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության ոստիկանության կողմից տրամադրված ծրագրի միջոցով։ Նախօրոք հրապարակված հարցաշարից դիմորդը տեղում պատասխանում է համակարգչային ծրագրով պատահականության սկզբունքով ընտրված 10 հարցի։

Գործնական քննությունը բաղկացած է 3 վարժությունից՝

- զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում,
- հրաձգություն և նշանակետի խոցում,
- անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում։

Քննությանը կարող են մասնակցել 18 տարեկանը լրացած ՀՀ քաղաքացիները։
Քննություններն անցկացվում են **հայերենով**։

Քննությունների գործընթացի իրականացման նպատակով ստեղծվում է հանձնաժողով՝ բաղկացած Կազմակերպության երկու և ՀՀ ՆԳՆ ոստիկանության մեկ ներկայացուցչից, ով նաև հանդիսանում է հանձնաժողովի նախագահ։
Քննություններին որպես դիտորդ կարող են նաև ներկա գտնվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության այլ ներկայացուցիչներ։ Քննությունների ընթացքը տեսաձայնագրվում է։

Քննությունը կարող է ընդհատվել կամ չեղարկվել անհաղթահարելի ուժի ազդեցության (անկանխատեսելի կամ անկանխարգելելի իրավիճակների) պատճառով կամ դիմորդի խնդրանքով։ Անհաղթահարելի ուժի (տարրերային, տեխնածին կամ մարդածին աղետներ, կամ այլ անկանխատեսելի կամ անկանխարգելելի իրավիճակներ, որոնք անհնարին են դարձնում քննության անցկացումը) պատճառով քննությունը չեղարկելու/ընդհատելու դեպքում Կազմակերպությունը նշանակում է քննական այլ օր։

Քննությունը դիմորդի խնդրանքով ընդհատելու պարագայում չկատարված կամ ընթացիկ (եթե վարժության կատարումը կիսատ է մնացել) վարժությունները գնահատվում են 0 միավոր։

2. Քննական գործընթաց

2.1. Հայտագրում և փաստաթղթերի ներկայացում

Քննության անցկացման օրերը հաստատվում են Կազմակերպության կողմից: Մասնակցելու համար դիմորդները գրանցվում են Կազմակերպության համացանցային կայքի միջոցով, ընտրելով նշանակված օրերից և ժամերից մեկը:

Քննությանն անհրաժեշտ է ներկայանալ նշանակված ժամից առնվազն 5 րոպե շուտ և ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Անձը հաստատող փաստաթղթի բացակայության կամ քննությունից ուշացման պարագայում քննությանը մասնակցել չի թույլատրվում և քննությունը համարվում է չեղարկված: Քննական հանձնաժողովի նախագահը կամ անդամը կարող է թույլ տալ ուշացած դիմորդին մասնակցել քննությանը, եթե տվյալ պահին քննասենյակում առկա են ազատ համակարգիչներ և տվյալ օրվա քննության գրանցման վերջին ժամին մնացել է ավելի քան 30 րոպե:

Հրաձգարանի ընդունարանում դրամարկղի պատասխանատուն ստուգում է քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը, քննության մասնակիցների ցուցակում հաստատում ներկայությունը, ընդունում տեսական քննության համար 3000 դրամ վճարը (կամ օգնում կատարել այն վճարային տերմինալի միջոցով, եթե այդպիսին առկա է հրաձգարանում)՝ տրամադրելով ՀԴՄ կտրոն (տերմինալի կտրոն, անդորրագիր) կամ ստուգում է նախապես կատարված վճարման անդորրագիրը:

2.2. Տեսական քննության անցկացում

Ընդունարանից հետո դիմորդն ուղղորդվում է դեպի տեսական քննության սենյակ:

Սկիզբ

Քննական հանձնաժողովի՝ տեսական քննության համար պատասխանատու անդամը դիմավորում է դիմորդին, վերցնում անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ նույնականացման քարտ) և վճարման կտրոնը (անդորրագիրը), փոխանցում համապատասխան աշխատակցին՝ անձնական տվյալները հավաստագրում լրացնելու համար:

Ընթացք

Անձնական տվյալները հավաստագրի վրա լրացնելուց հետո դիմորդը հրավիրվում է քննասենյակ, բջջային հեռախոսը և արգելված այլ առարկաները հանձնում հանձնաժողովին, տեղավորվում ազատ համակարգչի մոտ, քննական ծրագրում լրացնում անձնական տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և անձնագրի կամ նույնականացման քարտի համարը): Այնուհետև դիմորդը սկսում է տեսական քննությունը, որն անցկացվում է համակարգչային թեստավորման եղանակով՝ հարցատոմսում

պատահականության սկզբունքով ընդգրկված հարցերի պատասխաններից ընտրելով ճիշտ տարբերակները: Դիմորդին տրամադրվում է 30 րոպե ժամանակ, սակայն նա կարող է ավելի շուտ ավարտել: Հարցատոմսը բաղկացած է 10 հարցից, յուրաքանչյուր հարցը՝ 1 միավոր:

Քննության ընթացքում քաղաքացուն արգելվում է՝

1) իր մոտ ունենալ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր.

2) հաղորդակցվել քննությանը մասնակցող այլ քաղաքացիների հետ, միմյանց փոխանցել հարցատոմսերը կամ նշումների համար տրամադրված թերթիկները.

3) աղմկել կամ այլ կերպ խոչընդոտել քննության անցկացմանը:

Եթե հանձնաժողովի անդամը հայտնաբերում է, որ քննությանը մասնակցող քաղաքացին թույլ է տվել վերոնշյալ պահանջների խախտում, ապա դադարեցնում է տվյալ քաղաքացու մասնակցությունը քննությանը՝ այդ մասին կազմելով արձանագրություն: Տեսական քննությանը քաղաքացու մասնակցությունը դադարեցնելու դեպքում՝ որպես գնահատական, ամրագրվում է 0 միավորը:

Ավարտ

Քննությունն ավարտելուց հետո դիմորդը ձեռք է բարձրացնում, հանձնաժողովի անդամը մոտենում է և գրանցում քննության միավորը հավաստագրի վրա: Քննության ավարտին դիմորդը համակարգչի էկրանին տեսնում է քննության իր արդյունքը, ինչպես նաև կարող է հարցատոմսով անցնելով տեսնել իր կատարած սխալները: Անցողիկ շեմ է համարվում 8 միավորը, այսինքն՝ 8-10 միավոր հավաքելու դեպքում տեսական քննությունը համարվում է հանձնած, իսկ 0-7 միավորի դեպքում՝ չհանձնած:
Տեսական քննության ավարտից հետո հանձնաժողովի անդամը դիմորդին ուղղորդում է.

- տեսական քննությունը բարեհաջող հանձնելու դեպքում՝ դրամարկղի պատասխանատուի մոտ՝ գործնական քննության վճարը կատարելու համար, կամ ոստիկանության ներկայացուցչի մոտ՝ գործնական քննությունից ազատվելու փաստաթղթերի ստուգման համար,
- տեսական քննությունը չհանձնելու դեպքում՝ դեպի ելք:

Տեսական քննության անցողիկ շեմը հաղթահարած քաղաքացուն տրվում է հավաստագիր, որտեղ լրացվում է միայն տեսական քննության գնահատականը: Եթե դիմորդը գերադասում է գործնական քննությունը հանձնել մեկ այլ քննական օր, կամ չի հաղթահարում գործնական քննության անցողիկ շեմը, ապա նրա հավաստագիրը կնիքվում է միայն տեսական քննության գնահատականի համար և հանձնվում իրեն, տեղեկացնելով, որ գործնական քննությանը մասնակցության համար անհրաժեշտ է հետագայում ներկայանալ այդ հավաստագրով և անձը հաստատող փաստաթղթով:

Ուշադրություն. Տեսական քննության անցողիկ շեմը չհաղթահարած դիմորդը **<u>չի կարող նույն օրը վերահանձնել քննությունը</u>**, սակայն կարող է կրկին գրանցվել և մասնակցել հետագայում կազմակերպվող քննություններից մեկին:

2.3. Գործնական քննության անցկացում

Գործնական քննության են թույլատրվում միայն տեսական քննության անցողիկ շեմը հաղթահարած քաղաքացիները: Քննությանը մասնակցելու համար դիմորդը ծանոթանում է անվտանգության կանոններին և ստորագրում համապատասխան գրանցամատյանում: Այնուհետև, դիմորդը մոտենում է դրամարկղի պատասխանատուին և կատարում գործնական քննության համար 5000 դրամ վճարումը, բացառությամբ այն դեպքի, եթե նա «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածով ազատված է գործնական քննությունից:

Քննական հանձնաժողովի նախագահը կամ անդամը դիմորդից վերցնում է հավաստագիրը, ստուգում դրանում առկա տեսական քննության անցողիկ միավորը, տալիս է գործնական քննության գնահատման թերթիկը (Հավելված 1. Գնահատման թերթիկ) և ուղղորդում նրան դեպի գործնական քննության տեղամաս:

Գործնական քննությունից ազատվելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչը ստուգում է համապատասխան փաստաթղթերի առկայությունը և վավերականությունը, որոնց հաստատման դեպքում հավաստագիրը տեղում կնիքվում, ստորագրվում և հանձնվում է դիմորդին:

Վարժություն 1. Զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում

Կատարման կանոնները

Դիմորդը վճարման կտրոնով (անդորրագրով) և քննության գնահատման թերթիկով մոտենում է այն սեղանին, որտեղ ստուգվելու են զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքները: Քննական հանձնաժողովի՝ գործնական քննության համար պատասխանատու անդամը դիմավորում է դիմորդին և վերցնում վճարման կտրոնը (անդորրագիրը):

Սեղանին դրված են լինում քննական տոմսերով (Հավելված 2. Քննական տոմսեր) տուփ, Կալաշնիկովի ինքնաձիգին համանման քաղաքացիական զենք՝ մասնակիորեն քանդված, որոշակի մասերն ու մեխանիզմներն առանձնացված վիճակում և քաղաքացիական զենքի տարբեր տրամաչափի փամփուշտներ: Զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքները ստուգելիս դիմորդն ընտրում է քննական տոմսերից մեկը և հարցերին պատասխանում ըստ իր նախընտրած հերթականության՝ ցույց տալով քննական տոմսում նշված զենքի մասերը և մեխանիզմները (Հավելված 4. Ինքնաձիգի հիմնական մասերն ու մեխանիզմները) կամ ռազմամթերքը և դրա բաղկացուցիչ մասերը (Հավելված 5. Ռազմամթերք): Քննական տոմսերից յուրաքանչյուրը բաղկացած է 3 հարցերից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1 միավոր: Վարժության կատարման արդյունքում ստացված 1 միավորը համարվում է անբավարար, 2-3 միավորները՝ անցողիկ: Քննական տոմսը փոխելն արգելվում է:

Հանձնաժողովի անդամը զենքի ձեռքբերման գործնական քննության գնահատման թերթիկում լրացնում է վարժության գնահատականը:

Վարժությունից անցողիկ միավոր ստանալու դեպքում դիմորդը մոտենում է կրակակետին, որտեղ հրահանգչի կամ հրաձգության ղեկավարի ուղղորդմամբ պետք է կատարի ստորև ներկայացված վարժությունը։

Վարժություն 2. Հրաձգություն և նշանակետի խոցում

Կատարման կանոնները

Ուշադրություն. Սույն վարժության կատարման ամբողջ ընթացքում դիմորդը պարտավոր է հետևել նաև Վարժություն **3**-ում նկարագրված անվտանգության կանոններին և հրաձգության հրահանգներին։ **Ըստ էության, Վարժություն 2-ը և 3-ը իրականացվում են միաժամանակ**։

Հրաձգության ղեկավարի հրահանգով դիմորդը մոտենում է կրակակետին։ Վարժությունն իրականացվում է հետևյալ պայմաններով՝

1) 100 մետր հեռավորության վրա՝ 50սմ x 50սմ չափսերով, կամ 50 մետր հեռավորության վրա՝ 25սմ x 25սմ չափսերով մետաղական թիրախի վրա, Կալաշնիկովի ինքնաձիգին համանման 5,45 մմ կամ 7,62 մմ տրամաչափով քաղաքացիական ակոսափող զենքից.

2) դիմորդին հատկացվում է փամփշտատուփ և 7 փամփուշտ՝ 2 փորձնական, 5 ստուգարքային կրակոցի համար.

3) հրաձգության հրահանգիչը տալիս է «Մարտի՛» կամ «Ի զե՛ն» հրահանգը.

4) դիմորդը զենում է փամփուշտները, լիցքավորում է փամփշտատուփը, այն ամրացնում զենքին և ընդունում հարմար դիրք՝ հայտարարելով «Պատրաստ եմ».

<u>Հիշեցում.</u> Վարժության այս և հետագա մասերը կատարելիս խստորեն հետևել **անվտանգության կանոնների *բոլոր կետերին***։

<u>Հարմար դիրք.</u>

Ինքնաձիգով կրակ վարելու հիմնական դիրքերն են կանգնած, ծնկած և պառկած։ Կրակելուն ճիշտ պատրաստվելն ապահովում է ինքնաձիգի կայունությունը, որն իր հերթին ազդում է հրաձգության դիպուկության վրա։ Կրակողի մարմնի հարմար ու բնականոն դիրքը ստեղծում է մկանների նվազագույն լարում, և հրաձգությանը ճիշտ պատրաստվելու հիմնական պայմանն է։ Հրազեն ձեռք բերող քաղաքացիների կողմից զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության գործնական քննության ժամանակ դիմորդը կարող է իր ընտրությամբ ընդունել վերոնշյալ երեք հիմնական դիրքերից որևէ մեկը։ Այնուհանդերձ, դիմորդներին խորհուրդ է տրվում ընդունել պառկած դիրք, քանի որ այդպես ապահովվում է հրաձիգի և զենքի ամենակայուն վիճակը։ Ծնկած կամ կանգնած դիրք ընդունելը խորհուրդ է տրվում միայն այն դիմորդներին, ովքեր ունեն այդ դիրքերից կրակելու մեծ փորձ կամ համոզված են, որ իրենց համար այդ դիրքն ավելի հարմար է։

5) հրաձգության հրահանգչի «Լիցքավորե՛լ» հրահանգից հետո դիմորդն ապահովիչը փոխադրում է կրակի դիրք (ներքև), փակաղակի շրջանակը գազամխոցով և փակաղակով բռնակի օգնությամբ տանում է հետ ու բաց թողնում՝ փամփուշտը մղելով փամփշտանոց.

6) հրաձգության հրահանգչի «Կրա՛կ» հրահանգից հետո դիմորդը կատարում է 2 փորձնական կրակոց և զենքը դնում ապահովիչին (ապահովիչը փոխադրում է վերին դիրք).

7) յուրաքանչյուր փորձնական կրակոցից հետո հրաձգության հրահանգիչը դիմորդին տեղեկացնում է՝ խոցում եղել է, թե ոչ, իսկ վրիպելու դեպքում՝ մոտավորապես որքանով և ինչ ուղղությամբ է եղել շեղումը։ Փորձնական կրակոցներով թիրախը խոցելու դեպքում հրաձգության հրահանգիչը կարող է վարժությունը համարել կատարված, հրահանգելով դիմորդին ավարտել այն.

8) եթե փորձնական կրակոցներից հետո ակնհայտ խոչընդոտներ (զենքի կամ փամփուշտի խափանում) չեն առաջացել գործնական հրաձգությունը շարունակելու համար, ապա դիմորդը կրկին ընդունում է հարմար դիրք, փոխադրում ապահովիչը կրակի դիրք, կատարում 1-ից մինչև 5 (կախված թիրախի խոցումից) ստուգարքային կրակոց և զենքը դնում ապահովիչին.

9) կրակելուց հետո դիմորդը կատարում է զենքի լիցքաթափում։ Զենքի լիցքաթափում իրականացնելիս անհրաժեշտ է փամփշտատուփն առանձնացնել զենքից, անջատել ապահովիչը (իջեցնել ներքև), փակաղակի շրջանակը բռնակի օգնությամբ հետ տանել մինչև վերջ և պահել, տեսողական զննությամբ ստուգել փամփշտանոցը և փակաղակը։ Փամփուշտի բացակայության դեպքում պետք է բաց թողնել փակաղակի շրջանակի բռնակը, անվտանգ ուղղությամբ (կրակադաշտի՝ թիրախների ուղղությամբ) կատարել ստուգիչ կրակոց, որից հետո միացնել ապահովիչը (փոխադրել վերին դիրք)։ Այնուհետև պետք է զենքն ու փամփշտատուփը դնել սեղանին՝ հայտարարելով «Ավարտեցի».

10) հրաձգության հրահանգիչը ստուգում է, թե արդյոք պահպանված են բոլոր կանոնները.

11) հրաձգության հրահանգիչը գրանցում է վարժության արդյունքները։ Հանձնաժողովի անդամը զենքի ձեռքբերման գործնական քննության գնահատման թերթիկում լրացնում է վարժության գնահատականը.

12) հրաձգության համար վերը նշված ակնհայտ խոչընդոտների առկայության պարագայում դիմորդին տրամադրվում է այլ զենք և փամփուշտ։

Վարժություն 3. Անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում

Անվտանգության կանոնների պահպանումը և հրաձգության հրահանգների ճիշտ կատարումը գնահատվում են՝ հետևելով վարժությունների կատարման ամբողջ ընթացքին։

<u>Անվտանգության կանոններն են՝</u>

1. զենքը վերցնելիս ստուգել և լիցքաթափել այն,
2. արգելվում է զենքի փողն ուղղել կրակադաշտից՝ թիրախների ուղղությունից բացի որևէ այլ ուղղությամբ, անկախ այն բանից՝ զենքը լիցքավորված է, թե ոչ,
3. արգելվում է մատն անհարկի դնել ձգանի վրա, քանի դեռ չի ստացվել «Կրա՛կ» հրահանգը,
4. հետևել հրաձգության հրահանգչի հրահանգներին,
5. կրակելն ավարտելուց հետո կամ հրահանգչի հրահանգով կատարել զենքի ամբողջական լիցքաթափում։

Գործնական քննության ամբողջ ընթացքում վերոնշյալ անվտանգության կանոններից և հրաձգության հրահանգներից որևէ մեկի խախտման դեպքում հրաձգության հրահանգիչն իրավունք ունի քննական հանձնաժողովի հաստատմամբ ընդհատել գործնական քննությունը և այն գնահատել անբավարար:

2.4. Գործնական քննության գնահատում

Վարժությունների գնահատումն իրականացվում է՝ ըստ հետևյալ աղյուսակի.

Վարժություն	Գնահատական և չափորոշիչ
1) Զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում	Կատարվում է՝ ըստ քննական տոմսի մեջ գրված հարցերի միավորների: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար գումարվում է **1 միավոր**: Առավելագույն 3 (երեք) միավորից **անցողիկ շեմ է համարվում 2 (երկու) միավորը**:
2) Հրաձգություն և նշանակետի խոցում	Թվով 5 ստուգարքային կրակոցներից 1-ի թիրախը խոցելու դեպքում տրվում է **1 միավոր** և հրաձգությունը համարվում է հաջողությամբ հանձնած, իսկ բոլոր կրակոցների վրիպման դեպքում գործնական հրաձգությունը գնահատվում է անբավարար:
3) Անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում	1. Զենքը վերցնելիս ստուգել և լիցքաթափել այն - **1 միավոր** 2. Արգելվում է զենքի փողն ուղղել կրակադաշտից՝ թիրախների ուղղությունից բացի որևէ այլ ուղղությամբ, անկախ այն բանից՝ զենքը լիցքավորված է, թե ոչ - **1 միավոր** 3. Արգելվում է մատն անհարկի դնել ձգանի վրա, քանի դեռ չի ստացվել «Կրա՛կ» հրահանգը - **1 միավոր** 4. Հետևել հրաձգության հրահանգչի հրահանգներին - **1 միավոր** 5. Կրակելն ավարտելուց հետո կամ հրահանգչի հրահանգով կատարել զենքի լիցքաթափում - **1 միավոր** Առավելագույն 5 (հինգ) միավորից **անցողիկ շեմ է համարվում 5 (հինգ) միավորը**:

Գործնական քննության վերջնական գնահատականը ձևավորվում է բոլոր 3 վարժություններից ստացված գնահատականների հանրագումարից և անցողիկ շեմ է համարվում 8 (ութ) գնահատականը (միավորը), որից՝

1) զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգման փուլի առավելագույն 3 (երեք) միավորից **անցողիկ շեմ է համարվում 2 (երկու) միավորը**.

2) հրաձգություն և նշանակետի խոցման ստուգման փուլի առավելագույն 5 (հինգ) կրակոցներից **առնվազն 1 խոցման դեպքում** գնահատվում է 1 (մեկ) միավոր, որը համարվում է **անցողիկ շեմ**.

3) անվտանգության կանոնների պահպանման և հրաձգության հրահանգների ճիշտ կատարման ստուգման փուլից առավելագույն 5 (հինգ) միավորից **անցողիկ շեմ է համարվում 5 (հինգ) միավորը**:

Գնահատականները լրացնում է հանձնաժողովի անդամը՝ զենքի ձեռքբերման գործնական քննության գնահատման թերթիկում: Քննության ընթացքում առանձին վարժությունների գնահատականները դիմորդին չեն ներկայացվում: Բոլոր վարժությունները կատարելուց հետո դիմորդը կրակակետից վերադառնում է գնահատման լրացված թերթիկով և հանձնում այն հանձնաժողովի նախագահին կամ անդամներից մեկին:

Ուշադրություն. Գործնական քննության անցողիկ շեմը չհաղթահարած դիմորդը **չի կարող նույն օրը վերահանձնել քննությունը**, սակայն կարող է կրկին դիմել Կազմակերպությանը ոչ շուտ, քան գործնական քննությունից 3 օր անց և ոչ ուշ, քան տեսական քննության անցողիկ շեմը հաղթահարելուց հետո 6 ամսվա ընթացքում՝ այդ ժամանակամիջոցում կազմակերպվող քննություններից մեկին մասնակցելու համար: Նույնը վերաբերում է նաև այն դիմորդներին, ովքեր հաղթահարել են տեսական քննության անցողիկ շեմը, սակայն չեն ցանկանում այդ օրը հանձնել գործնական քննությունը:

Վերոնշյալ դեպքերում դիմորդը կարող է առանց նախօրոք գրանցվելու, իր հետ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ և մեկ կնիքով, մասամբ լրացված հավաստագիրը ներկայանալ ցանկացած այլ քննական օր՝ քննության ժամերին, սակայն ոչ ուշ, քան տեսական քննության անցողիկ շեմը հաղթահարելուց հետո 6 ամսվա ընթացքում:

Նշված ժամկետը բաց թողնելու դեպքում տեսական և գործնական քննությունները պետք է հանձնել նորից՝ կատարելով քննությունների համար նախատեսված վճարները:

2.5. Արդյունքների ամփոփում և հայտնում

Հանձնաժողովի նախագահը կամ անդամը հաշվարկում է գործնական քննության միավորները, որոնց անցողիկ լինելու դեպքում արդյունքն արձանագրում հավաստագրի վրա: Գործնական քննության միավորների անցողիկ չլինելու դեպքում հավաստագրի համապատասխան մասը թողնվում է դատարկ և այն վերադարձվում է դիմորդին՝ հետագայում կազմակերպվող քննություններից մեկին դրանով ներկայանալու համար:

Վերջնական գնահատականը դիմորդին հայտնում է հանձնաժողովի նախագահը կամ անդամներից մեկը՝ քննության հանձնման օրը:

Դիմորդի քննությունների բոլոր գնահատականները պահվում են նաև Կազմակերպության տվյալների շտեմարանում:

2.6. Բողոքարկում

Քննության արդյունքները կարելի է գրավոր բողոքարկել քննությունից անմիջապես հետո՝ հանձնաժողովին, լրացնելով դիմում-բողոքի ձևաթուղթը (Հավելված 3. Դիմում-բողոքի ձևաթուղթ)։ Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր, իսկ բողոքարկողի պահանջով՝ հեռախոսազանգով կամ էլեկտրոնային նամակով։ Բողոքը բավարարելու դեպքում դիմորդի քննությունը համարվում է հանձնված, եթե բողոքարկման արդյունքով վերանայված միավորը անցողիկ է, կամ դիմորդը կարող է կանչվել քննությունը կամ դրա առանձին վարժությունները վերահանձնելու, եթե բողոքի բավարարման արդյունքն անորոշ է։

2.7. Հավաստագրի հանձնում

Տեսական և գործնական քննությունները բարեհաջող հանձնած, կամ տեսական քննությունը բարեհաջող հանձնած և գործնական քննությունից ազատված քաղաքացիներին նույն օրը տրվում է «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու համապատասխան փաստաթուղթ՝ հավաստագիր (ՁԵ 1)։

Տեսական և գործնական քննությունների անցողիկ շեմերը հաղթահարած քաղաքացիների վերջնական հավաստագրի վրա լինում են թվով երեք կնիքներ, որոնք, համապատասխանաբար, հաստատում են տեսական քննության գնահատականը, գործնական քննության գնահատականը և Կազմակերպության տնօրենի ստորագրությունը։

Տեսական քննության անցողիկ շեմը հաղթահարած և գործնական քննությունից ազատված քաղաքացիների վերջնական հավաստագրի վրա լինում են թվով երկու կնիքներ, որոնք, համապատասխանաբար, հաստատում են տեսական քննության գնահատականը և Կազմակերպության տնօրենի ստորագրությունը։

Զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու վերջնական **հավաստագիրն անժամկետ է**։ Այն կարող է օգտագործվել ֆիզիկական անձանց համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված թույլտվություններով համապատասխան քանակի և տեսակների քաղաքացիական և ծառայողական զենք ձեռք բերելիս կամ դրանցով պարգևատրվելիս։

Հավելված 1. Գնահատման թերթիկ

ԹԵՐԹԻԿ
ՁԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Դիմորդ՝ _____,
Ազգանուն Անուն Հայրանուն

Քննության _____,
օր. ամիս. տարեթիվ

Հ/Հ	Վարժության անվանումը	Վարժության միավորներ					Ընդհանուր
1	Ձենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում	1	1	1			Անցողիկ՝ առնվազն 2
2	Հրաձգություն և նշանակետի խոցում	1					Անցողիկ՝ 1
3	Անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում	1	1	1	1	1	Անցողիկ՝ 5

Քննությունն ընդունող
Հանձնաժողովի նախագահ՝ _____.
Ստորագրություն Ազգանուն, անուն, հայրանուն

Հավելված 2. Քննական տոմսեր

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 1
Ցույց տալ՝
1. գազախողովակը փողի պահպանակով (1 միավոր)
2. փողը փողատուփով, նշանառության հարմարանքներով, ատրճանակային բռնակով և կոթով (1 միավոր)
3. փողակալը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 2
Ցույց տալ՝
1. շամփուրը (1 միավոր)
2. փողաբերանի արգելակը (1 միավոր)
3. փակաղակի շրջանակը գազամխոցով (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 3
Ցույց տալ՝
1. պիտույքների պահատուփը (1 միավոր)
2. փողատուփի կափարիչը (1 միավոր)
3. հետադարձ մեխանիզմը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 4
Ցույց տալ՝
1. փողը (1 միավոր)
2. նշանոցային հարմարանքները (1 միավոր)
3. փակաղակը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 5
Ցույց տալ՝
1. գազամխոցը (1 միավոր)
2. փակաղակի շրջանակը (1 միավոր)
3. գազախողովակը փողի պահպանակով (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 6
Ցույց տալ՝
1. զենքին համապատասխանող տրամաչափի փամփուշտը (1 միավոր)
2. զարկանաձգանային մեխանիզմը կամ հարվածային մեխանիզմը (1 միավոր)
3. փակաղակը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 7

Ցույց տալ՝

1. կոթը (1 միավոր)
2. փակաղակի շրջանակը գազամխոցով (1 միավոր)
3. նշանոցային հարմարանքները (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 8

Ցույց տալ՝

1. փամփշտատուփը (1 միավոր)
2. հետադարձ մեխանիզմը (1 միավոր)
3. փողակալը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 9

Ցույց տալ՝

1. գազախողովակը փողի պահպանակով (1 միավոր)
2. փակաղակը (1 միավոր)
3. փողատուփի կափարիչը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 10

Ցույց տալ՝

1. ապահովիչը (1 միավոր)
2. հետադարձ մեխանիզմը (1 միավոր)
3. փողաբերանի արգելակը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 11

Ցույց տալ՝

1. փամփուշտի հրապատիճը (1 միավոր)
2. պարկուճը (1 միավոր)
3. գնդակը (1 միավոր)

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ № 12

Ցույց տալ՝

1. փամփուշտի բաղկացուցիչ մասերը (1 միավոր)
2. գնդակը (1 միավոր)
3. հրաձգության համար ոչ պիտանի փամփուշտը (1 միավոր)

Հավելված 3. Դիմում-բողոքի ձևաթուղթ

«Ազատազէն» ԿՀԿ-ի քննական հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

Դիմող՝ _____
(անուն, ազգանուն)

Էլ. հասցե՝ _____

Հեռ.՝ _____

_____
(ամսաթիվ)

ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

_____
_____
_____
_____
_____
_____

(դիմում-բողոքի առարկան)

Դիմողի ստորագրությունը՝ / /

Հավելված 4. Ինքնաձիգի հիմնական մասերն ու մեխանիզմները

Ծանուցում. նախատեսված է քաղաքացիական զենք, այդ թվում՝ ակոսափող հրազեն ձեռք բերող քաղաքացիների կողմից զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության գործնական քննությանը նախապատրաստվելու համար: **Չի տրամադրվելու դիմորդներին քննության ընթացքում**:

1 – փող

2 – փողատուփ

3 – նշանոցային կամ նշանառության հարմարանք

4 – ատրճանակային բռնակ

5 – կոթ

6 – զարկանաձգանային մեխանիզմ կամ հարվածային մեխանիզմ

7 – փողաբերանի արգելակ (արգելակ-փոխհատուցիչ)

8 – փողատուփի կափարիչ

9 – փակաղակ

10 – փակաղակի շրջանակ

11 – գազամխոց

12 – հետադարձ մեխանիզմ

13 – գազախողովակ

14 – փողի պահպանակ

15 – փողակալ

16 – պահեստատուփ (փամփշտատուփ)

17 – շամփուր

18 – պիտույքների պահատուփ

19 – ապահովիչ (փոխադրիչ)

Հավելված 5. Ռազմամթերք

Ա. Տարբեր տրամաչափի ռազմամթերք.

1 – 5,45 × 39 մմ

2 – 7,62 × 39 մմ

3 – 7,62 × 51 մմ (.308 Win)

4 – 7,62 × 54 մմ

Բ. Փամփուշտի բաղկացուցիչ մասերը.

I – գնդակ

II – պարկուճ

III – հրապատիճ

Գ. Հրաձգության համար ոչ պիտանի փամփուշտներ։